ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА А РМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
МЕРДЗАВАНСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մերձավանի գյուղական համայնք.
Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1.
Հեռախոս (0231) 6-00-25
էլ. փոստ gyuxmerdzavan @ mail.ru

01.04.2015թ.
թիվ 57

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. Ս. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ի կատարումն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77[1]-րդ հոդվածի 1-ին մասի, Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ղեկավարի 2015 թվականի մարտ ամսվա ընդունած որոշումները և արձակած կարգադրությունը:

Առդիր 5 /հինգ/ թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց N1, հեռախոս (0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

6 մարտի 2015 թվականի N24-Ա

ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N50-Ն որոշումն, **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի 2015 թվականի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Ներկայացուցչական ծախսեր>> հոդվածով նախատեսված գումարից 300 000 ՀՀ դրամ տրամադրել համայնքի գյուղապետարանի աշխատակազմի, <<Մերձավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ, <<Կրթություն և մշակույթ >> միացյալ տնօրինության, <<Մերձավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ, <<Հայ փոստ>> ՓԲԸ Մերձավանի մասնաճյուղի, <<Մերձավանի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ աշխատակցուհիներին /թվով 75 կին/ Կանանց տոնի՝ Մարտի 8-ի առթիվ նվերներ գնելու և միջոցառում կազմակերպելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2015 թվականի մարտի 6

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մերձավանի գյուղական համայնք.
Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1.
Հեռախոս (0231) 6-00-25
էլ. փոստ gyuxmerdzavan @ mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

17 մարտի 2015 թվականի N25-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 17-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի հունիսի 6-ի N4 նիստի N02-Ն որոշումն, **որոշում եմ.**

1. Համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0,00237 հեկտար հասարակական կառուցապատման հողամասին տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, մարզ Արմավիրի, գյուղ Մերձավան Երևանյան N63/6:

2. Աշխատակազմի քարտուղարին՝ /Հ. Գևորգյանին/ սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արմավիրի մարզային ստորաբաժանում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2015 թվականի մարտի 17

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մերձավանի գյուղական համայնք.
Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1.
Հեռախոս (0231) 6-00-25
էլ. փոստ gyuxmerdzavan @ mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

23 մարտի 2015 թվականի N26-Ա

ՀԱՄԵՐԳԻ ՏՈՄՍԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի և 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2015 թվականի մարտի 20-ի թիվ 01/08.2/884-15 գրությունը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N50-Ն որոշումն, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի 2015 թվականի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ մշակութային կազմակերպություններ>> հոդվածով նախատեսված գումարից համայնքի գյուղապետարանի ու համայնքային ենթակայության <<Կրթություն և մշակույթ>> միացյալ տնօրինության աշխատակիցների համար ձեռք բերել <<Մենք պահանջատեր ենք >> խորագիրը կրող <<ԱԼՄԱՍՏ>> մշակութային կենտրոնի համերգ-երեկոյի տոմսերը՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100 ամյա տարելիցին, ընդամենը՝ 20 հատ, յուրաքանչյուրը՝ 1 500 ՀՀ դրամ արժողությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2015 թվականի մարտի 23

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խաչուղի 2-րդ փողոց N1, հեռախոս (0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

24 մարտի 2015 թվականի N3-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի դրույթներով, **կարգադրում եմ.**

1.Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնաժողովին՝ (Լ. Գրիգորյանին) ուումնասիրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի գյուղապետարանի ծառայողական ՎԱԶ 2107 մակնիշի, 2007թվականի արտադրության, ավտոմեքենայի մասնակի վերանորոգման աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտությունը, գնահատել իրավիճակը և կատարվելիք աշխատանքների վերաբերյալ կազմել թերությունների ակտ:

3.Հանձնաժողովին (Լ. Գրիգորյանին) սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել մեկամսյա ժամկետում:

4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2015 թվականի մարտի 24

գ. Մերձավան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավանի
գյուղական համայնքի ղեկավարի
2015 թվականի մարտի 24-ի
N 3-Ա կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

Լ. Գրիգորյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ղեկավար:

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Գրիգորյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ:

Վ. Խուրշուդյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղապետարանի ենթակայության <<Կրթություն և մշակույթ>> մ/տ տնօրեն:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՀՐԱՆՏՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ